ՄԱՅՐ ԱԹՈՌ

Ս. թ. նոյեմբերի 7-ին Ս. Էջմիածնի Մայր տաճարում Հոկտեմբերյան ռևոլուցիայի 27-րդ տարեդարձի օրը, ս. պատարագ մատուցվեց, որից հետո կատարվեց Հանրապետական մաղթանք։ Պատարագում էր տ. Եզնիկ վարդ. Ազնավուրյանը։

Քարոզ խոսեց գերաշնորհ տ. Կարապետ եպիսկ. Թումանյանը, որը բացատրեց Հոկտեմբերյան ռևոլուցիայի ազատարար դերը և ռևոլուցիայի հետ կապեց նաև մեր ժողովրդի վերածնունդն ու ազատագրումը Նոյեմբերյան ռևոլուցիայի միջոցով։

***

Ս. թ. նոյեմբերի 7-ին Երևանի Ս. Սարդիս եկեղեցում ս. պատարագ մատուցվեց Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլուցիայի 27-րդ տարեդարձի առթիվ։ Պատարագից հետո կատարվեց Հանրապետական մաղթանք։

Պատարագիչ գերաշնորհ տ. Ռուբեն եպիսկ. Դրամբյանը քարոզ խոսեց և բացատրեց Հոկտեմբերյան ռևոլուցիայի ազատարար նշանակությունը բոլոր ճնշված ժողովուրդների համար։

Առանձնապես կանգ առնելով հայ ժողովրդի ազատագրման և հայ պետականության ստեղծման ու կազմակերպման խնդիրների վրա, նշեց այն մեծ օժանդակությունը, որ ռուս մեծ ժողովուրդը մատուցեց հայ ժողովրդին, փրկելով նրան վերջնական բնաջնջումից։

***

Սույն թվի նոյեմբերի 1-ին տեղի ունեցավ Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարանի բացումը։

Գերաշնորհ տ. Ներսես եպիսկոպոս Աբրահամյանի գլխավորությամբ կատարվեց բացման հանդեսը։

Ողջույնի խոսքով հանդես եկան գերաշնորհ տ. Ռուբեն եպիսկոպոս Դրամբյանը և ճեմարանի տեսուչ պ. Մինաս Մինասյանը։ Բացման հանդեսին ներկա էին Ս. Էջմիածնի բոլոր միաբանները, Հոգևոր ճեմարանի սաները, ուսուցչական և տեխնիկական անձնակազմը։

Նոյեմբերի 2-ից սկսվեցին կանոնավոր պարապմունքները։

***

Սույն թվի նոյեմբերի 10-ին Արմավիրից Ս. Էջմիածին ժամանեց գերաշնորհ տ. Սուրեն եպիսկոպոս Թորոսյանը վերադարձելու Հյուսիսային Կովկասի եկեղեցական գործերի մասին։ Տ. Սուրեն եպիսկոպոսը իր թեմում բաց է արել 3 նոր եկեղեցի։

***

Սույն թվի նոյեմբերի 15-ին գերաշնորհ տ. Կարապետ եպիսկոպոս Թումանյանը մեկնեց Ռոստով-Նախիջևան որպես թեմական առաջնորդ։

ՀԵՌԱԳՐՆԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ Զ-ԻՆ

Մենք, Դամասկոսի հայերս, թվով մի քանի հազար մարդ, այսօր, կիրակի, օգոստոսի 19-ին հավաքվելով առաջնորդարան, լսեցինք Հայաստանից վերադարձած եկեղեցական ժողովի պատգամավորներ պ. պ. Եփրեմ Ելեզյանի, Գևորգ Բաբայանի և դ-ր պ. Կարագյոզյանի հաղորդագրությունները Էջմիածնի ժողովի և Սով. Հայաստանի հաջողությունների մասին։ Կարծում ենք, որ արտահայտում ենք Սիրիայի հարյուր հազարավոր հայերի միահամուռ ցանկությունը, խանդավառությամբ ողջունելով Ձերդ Վեհափառության ընտրությունն Էջմիածնի գահին։

Ընդունեցեք մեր անկեղծ շնորհակալությունը Հայրենական մեծ պատերազմի ընթացքում Ձեր գովական աշխատանքի համար, աշխատանք, որ Դուք այժմ էլ անխոնջ շարունակում եք։

Մենք աղոթում ենք ամենակալին Ձեզ երկար կյանք և առողջություն շնորհելու, որպեսզի Դուք նպաստեք ամբողջ աշխարհի հայության հավաքագրմանը Մայր Հայրենիքում՝ Ս. Էջմիածնի շուրջը։

Միտինգի նախագահության կողմից
Նախագահ ԱՐՏԻՆ ՄԱԴԵՅԱՆ
Քարտուղար ՀԱԿՈԲ ԽԱՇՄԱՆՅԱՆ

***

«Հայ ազգային ճակատի Լիոնի շրջանի մասնաճյուղը» հետևյալ գրությունն է ուղղել Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին.

«ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅՈՒՆ
Տ. Տ. ԳԵՎՈՐԳ Զ
ԱԶԳԸՆՏԻՐ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Վեհափառ Հայր,

Նորին սրբազան օծության Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի ընտրության և Հայաստանյայց եկեղեցվո Ս. Էջմիածնի Մայր Աթոռին գահակալության առթիվ Ֆրանսահայ Ազգային Ընդհանուր Միության «Ազգային ճակատ», Կենտրոնական Ֆրանսայի Շրջանային կենտրոնական Վարչությունս հանուն իր թեմին կուգա շնորհավորելու իր Արժանընտիր Հոգևոր Նոր Պետը, սրտանց մաղթելով Նորին Վեհափառության արևշատություն և կարողություն։

Հայաստանյայց եկեղեցվո Նորընտիր եպիսկոպոսապետը վստահ կրնա ըլլալ ի սիրտս ցրված իր հոտին անկեղծ սիրույն դեպի իր եկեղեցին և անոր սուրբ ավանդությունները։

Վեհափառ Տեր, մեր գաղութին սրտաբուխ փափագն է տեսնել հայ եկեղեցին իր իսկական բարձրության վրա։

Թեմիս հայորդիները անհունորեն երջանիկ պիտի զգան ինքզինքնին, երբ օր մը ուշ կամ կանուխ, իրականացած տեսնեն իրենց դարավոր և կարոտալից երազները՝ հաստատվիլ իրենց պաշտելի Հայրենիքին՝ Սովետական Հայաստանի սահմաններեն ներս և իրենց անխոնջ աշխատանքով սատար հանդիսանան անոր վերելքին և մեծության համար։

Արդ, Վեհափառ Տեր, երկյուղածությամբ կուգանք մատչել Վեհափառությանդ օծյալ Սուրբ Աջույն, հայցելով Ձեր Հայրական Սուրբ օրհնությունը»։

Որդիական ամենախոնարհ հարգանքներով

Նախագահ՝
Ս. ԱԶՔԲԱՅՅԱՆ
Քարտուղար՝
ՀՈՎՍԵՓ ՏԵՅԿՐՄԵՆՋՅԱՆ

***

Բուխարեստից, Ռումինիայի հայոց թեմական առաջնորդի տեղապահ գերապատիվ տ. Վազգեն վարդապետը Ամենայն Հայոց Վեհափառ կաթողիկոս Տ. Տ. Գեվորգ Զ-ին ուղղած իր առ 8-ն սեպտեմբեր 1945 թ. № 4466 գրության մեջ հայտնում է հետևյալը.

«Վեհափառ Տեր,

Այսու կը հաստատեմ իմ 23 հուլիս 1945 թվակիր գրությունը, որով պատիվ ունեցա զեկուցանելու Ձերդ Վեհափառության գաղութին մեջ ստեղծված ոգևորության մասին մեր վերադարձեն հետո։

«Այդ ոգևորության արդյունքներեն մին եղավ այն, որ մեր ժողովուրդը և թեմական իշխանությունը ավելի և ավելի մոտ կզգան ինքզինքնին Մայր Հայրենիքին և Մայր Աթոռին։

«Ինչպես իմ Ս. Էջմիածին եղած ատեն արդեն հաղորդած էի Ձերդ Վեհափառության, այստեղ մենք հիվանդանոց մը ունեինք պատերազմի վիրավորներու համար, որ այժմ փակվեցավ։

«Մեր բոլորիս ցանկությունն ըլլալով սույն հիվանդանոցի ամբողջ կահավորումը նվիրել մեր Հայրենիքին, Թեմական Խորհուրդը որոշեց և պատշաճ միջոցներ ձեռք առավ, որ մոտ ատենեն այդ հիվանդանոցի բոլոր մեքենաները, գործիքները ու կահավորումը դեպի Հայաստան փոխադրվեն Ռումինիո «Հայաստանյան ճակատի» Հայրենասիրական կազմակերպության միջոցով Հայաստանի կառավարության տրամադրության տակ դրվելու նպատակով հիվանդանոցի մը համար»։

***

Բեյրութ-Անթիլյասից Տանն Կիլիկիո Վեհափառ կաթողիկոս Տ. Տ. Գարեգին Առաջինը հեռագրում է. «Հայտնում ենք մեր շնորհավորանքները ճեմարանի բացման առթիվ»։

***

Բեյրութից գերաշնորհ տ. Արտավազդ արքեպ. Սուրմեյանը Ամենայն Հայոց Վեհափառ կաթողիկոս Տ. Տ. Գեվորգ Զ-ին ուղղած հեռագրով շնորհավորում է ճեմարանի բացումը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ 25-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅՈՒՆ ՍՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵՎ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՈՒՆՈՎ ՍՏՍՑՎԱԾ ՀԵՌԱԳՐՆԵՐԻՑ

ԱԹԵՆՔԻՑ

Էջմիածին.

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԵՎՈՐԳ Զ-ԻՆ

Ձերդ Վեհափառության ցուցմունքի համաձայն տոնեցինք Սովետական Հայաստանի 25-րդ տարեդարձը։ Այդ կապակցությամբ կենտրոնական տաճարում անձամբ ես բազմաթիվ աղոթողների ներկայությամբ հանդիսավոր արարողություն կատարեցի։ Ժամերգությունից հետո քարոզ եղավ և լսվեց ազգային կոմիտեի կողմից կազմակերպված զեկուցում Հայաստանի Ռեսպուբլիկայի հաջողությունների և շինարարության մասին։

Նոյեմբերի 29-ին բոլոր դպրոցները փակ էին և ուսուցիչները բացատրում էին այդ օրվա նշանակությունը։

Արքեպիսկոպոս ՄԱԶԼՈՒՄՅԱՆ

***

ԹԵՀՐԱՆԻՑ

ԷՋՄԻԱԾԻՆ, ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ Զ-ԻՆ

Համաձայն Վեհափառության հեռագրական կարգադրության այսօր, նոյեմբերի քսաներեքին, Թեհրանի նորակառույց Աստվածածնի եկեղեցում բազմահազար աղոթողների ներկայությամբ Հայաստանի Ռեսպուբլիկայի քսանհինգերորդին քարոզեցի Հայաստանի Ռեսպուբլիկայի կուլտուրական, տնտեսական, շինարարական բուռն վերելքի մասին։

Իրանա-Հնդկաստանի հայության և իմ կողմից ջերմորեն շնորհավորելով Հայաստանի Ռեսպուբլիկայի փառապանծ քսանհինգամյակը, ցանկանում ենք Ռեսպուբլիկային անսասանություն և իր հետագա աշխատանքներում հաջողություն։

Իրանա-Հնդկաստանի թեմի առաջնորդ
ՎԱՀԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՈՍՏԱՆՅԱՆ

***

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻՆ

Նորին Վեհափառության բարձր կարգադրության և Գերագույն Հոգևոր Խորհրդի հեռագրական առաջադրության համաձայն նոյեմբերի 29-ին Ս. Գեվորգ եկեղեցում հոգևորականության և խուռն բազմության ներկայությամբ Սովետական Հայաստանի 25-րդ պանծալի տարեդարձի առթիվ կատարվեց ս. պատարագ և Հանրապետական մաղթանք։ Նույն օրը Ախալցխայի Ս. Գրիգոր Լուսավորիչ և Ախալքալաքի Ս. Խաչ եկեղեցիներում կատարվել է ս. պատարագ և մաղթանք։ Պատարագ մատուցի ինքս։ Հայաստանի պահպանության և անսասանության հիշատակումից առաջ բանաստեղծի «Ընդ աստեղոք ի՞նչ կա սիրուն» տողերը բնաբան ընտրելով դարեր տառապող, դարեդար նահատակվող Հայաստանի վերածննդյան 25-ամյա փառապանծ տարեդարձը հանդես բերի իր բոլոր փառքով ու փայլով, յուր աննախընթաց առաջադիմությամբ։ Հոգով միշտ արի, վսեմին սիրահար, ստեղծագործող, հրաշակերտող ու անընդհատ շինարար հայը սովետական իշխանության փողփողող դրոշակի ներքո, մոռացությունից պարծանքի արժանի դարձած, ցնծագին տոնում է Հայրենիքի վերածննդյան 25-ամյա տարեդարձը։ Փա՜ռք քաջակորով հային, հավերժ փա՜ռք տոնական Հայաստանին։ Դեպի մայր Հայրենիք, դեպի Սովետական Հայաստան է թռչում հայի

սիրտն ու հոգին այս երջանկավետ օրը, դեպի ցանկալի Հայաստան, մեր պաշտելի նախնյաց օրրանը, որի հողի ու ջրի կարոտն ու փափագը սրտում ոսկեվառ արևի ծագման 25-ամյակն է այսօր տոնում և ուխտում նվիրաբերել յուր էությունը նրա բարօրության սուրբ սեղանին։ Միացյալ Հայաստան փափագելի վեհանունը լսելու տենչանքը հարուցանելով ավարտեցի խոսքս բարեխնամ ռուս ազգին, Հայաստանի փրկիչ հանճարեղ Ստալինին հայտնելով Վրաստանի հայության գերխոնարհ երախտագիտական զգացմունքը մայր Հայրենիքին կյանք ու լույս պարգևելու համար, այլև լի հույս, որ Գերապանծ Ստալինի մեծագույն արդարամտությամբ և իմաստությամբ կպսակվի ազատատենչ հայ ազգի բաղձանքը՝ տեսնել նվիրական Միացյալ Հայաստանի վերածնունդն ևս։

Ապա սրտահույզ հնչեց Հայաստանի և եղբայրական ռեսպուբլիկաների պահպանության և անսասանության սրտագին ադերսն առ Բարձրյալը։ Սուրբ պատարագից հետո ամենայն հանդիսավորությամբ կատարվեց Հանրապետական մաղթանք։ Մաղթանքը ավարտվեց Պահպանիչով Փրկչի ամենազոր հովանին հայցելով Սովետական Հայաստանին և Հայաստանի անսահման փառքով ցնծացող ու մխիթարվող հայության լուսաշող փարոս սուրբ էջմիածնին, Վեհաշնորհ Գահակալին և յուր հոտին։

Պանծալի տոնի առթիվ բաղդ ունեցա հեռագրով շնորհավորել համայնքների և նվաստիս կողմից անզուգական տոնը ազգիս Վեհափառ Հայրապետին և որդիական ակնածությամբ ամենախոնարհաբար խընդրել արժանի անել Վրաստանի հայերի սիրագեղ շնորհավորանքը և հայրենասիրական ջերմ զգացմունքները հայտնել Հայաստանի կառավարությանը բերկրալի տոնի առթիվ։

Անկարող եմ ձայնակից չլինել Գերադույն Հոգևոր Խորհրդի օրհնությունը միշտ վայելող մատաղ սերնդի երդ ու կանչին և շասել զավակներիս հետ մայր Արաքսի քույր Կուր գետի ափերից։

Փա՜ռք քեզ, մի՜շտ փառք, հերոսական Հայաստան, հանճարեղ դու ճարտարապետ, շինարար, ժողովուրդների սուրբ դաշինքով ստալինյան դու ծաղկում ես և կերտում լույս ապագադ։

Սահակ ավագ քահ. ՍԱՀԱԿՅԱՆ

Առաջնորդական Փոխանորդ Վրաստանի

***

ԲՈՒԽԱՐԵՍՏԻՑ

ԷՋՄԻԱԾԻՆ, ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ Զ-ԻՆ

Սովետական Հայաստանի 25-րդ տարեդարձի ամենահանդիսավոր օրը Ռումինիայի հայկական թեմի անունից հղում եմ Ձեզ և Ձեր միջոցով հայկական կառավարությանը մեր սրտաբուխ ողջույնները։

Կեցցե՜ հայ ժողովուրդը և Սովետական Հայաստանը ռուս մեծ ժողովուրդի հետ անքակտելի եղբայրական կապի մեջ։

ՎԱՉԳԵՆ ՎՐԴ. ԲԱԼՃՅԱՆ

***

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱՅԻՑ

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ Զ-ԻՆ

Սովետական Հայաստանի 25-րդ տարեդարձի կապակցությամբ Աղեքսանդրիայի հայերի կազմակերպած տոնակատարության կոմիտեն Ձերդ Վեհափառության ու Ձեր ամբողջ հոգևորականությանն է հղում իր խորին հարգանքները այն անսասան հավատքով, որ Ձեր աղոթքների շնորհիվ ազգի օրինական ձգտումները միանգամայն պետք է իրականանան։

Կոմիտեի կազմակերպողների անունից
ՎԱՐԴԱՆ ՋԱՆԳՅԱՆ

***

ԲՈՒԵՆՈՍ-ԱՅՐԵՍԻՑ

ԷՋՄԻԱԾԻՆ, ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ Զ-ԻՆ

Հայկական համագումարը աշխարհական պատգամավոր Բագչեջյանից սրտառուչ հիացմունքով լսեց բանվոր դասակարգի հաջողությունների, Էջմիածնի ազգային եկեղեցու ժողովի և սիրելի Հայրենիքի առաջադիմության մասին։

Արգենտինյան Ռեսպուբլիկայի Հայկական Միությունը հղում է իր ջերմեռանդ աղոթքները Մայր Աթոռի և Սովետական Հայաստանի հավերժ ծաղկման համար։

Համագումարի նախագահ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

***

ՂԱԶՎԻՆԻՑ

Ղազվինի (Իրան) հայ համայնքը և Ազգային խորհուրդը Ամենայն Հայոց Վեհափառ կաթողիկոսին ուղարկել է հետևյալ հեռագիրը՝ ընդունված Սովետական Հայաստանի 25-րդ տարեդարձին նվիրված հանդիսավոր նիստում.

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ԳԵՎՈՐԳ Զ-ԻՆ

Ղազվինի հայ համայնքը հղում է Ձեզ իր անկեղծ և սրտագին շնորհավորանքները Հայաստանում սովետական իշխանության հաստատման 25-րդ տարեդարձի առթիվ։ Խորապես և անսահմանորեն հիացած ենք այն վիթխարի նվաճումներով, որ Հայաստանը ձեռք է բերել սովետական իշխանության օրով։

Հայ ժողովուրդը՝ վերածնված Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլուցիայի շնորհիվ՝ ամուր և հաստատ ընթանում է դեպի առաջ, հաղթանակից դեպի նոր հաղթանակ Սովետական Միության ժողովուրդների եղբայրական ընտանիքի մեջ։

Թող Աստված օրհնի նրանց ստեղծագործ աշխատանքը ի բարօրություն Մայր Հայրենիքի։

Աշոտ Մելիքյան, Մարտիկ Ավետիսյան, Մկրտիչ Տեր-Նիկողոսյան, Ներսես Ավետիսյան, Տեր Մեսրոպյան քահանա, Շավարշյան Սարգիս, Երվանդ Գաբրյան

***

Ս. թ. նոյեմբերի 25-ին Սովետական Հայաստանի 25-ամյակի տարեդարձին Ս. Էջմիածնի Մայր տաճարում մատուցվեց պատարագ, որից հետո կատարվեց Հանրապետական մաղթանք։ Պատարագում էր գերաշնորհ տ. Ներսես եպիսկոպոս Աբրահամյանը, որը հանգամանորեն բնորոշեց Նոյեմբերյան ռևոլուցիայի փրկարար դերը, մեր ժողովրդի պահպանման և նրա պետականության ստեղծման գործում։ Քարոզի վերջում նա կոչ արեց հավատացյալներին ամբողջ ուժերով նվիրվել Հայրենիքի միասնության և նրա զարգացման պատմական մեծ գործին։

***

Սույն թվի նոյեմբերի 25-ին Երևանի Ս. Աստվածածին եկեղեցում ս. պատարագ մատուցվեց Սովետական Հայաստանի 25-ամյակի տոնակատարության առնչությամբ։ Պատարագից հետո կատարվեց Հանրապետական մաղթանք։ Պատարագիչ գերաշնորհ տ. Ռուբեն եպիս. Դրամբյանը իր քարոզում մեկնաբանեց հայ ժողովրդի ազատագրման հարցը կապված Նոյեմբերյան ռևոլուցիայի հետ։ Նա կոչ ուղղեց ժողովրդին՝ էլ ավելի փարվելու հայ ժողովրդի պետականությանը և ամբողջ ուժերը նվիրել մեր ժողովրդի միասնությունը և պետականությունն ամրացնելուն ու զարգացնելուն։